

դեմ գրգռելը, ի՞նչ աւատականք զագգային-
ները չգտատախեւէին ու դատաստանին չհանէին,
Երիտարեթուպոլսեցուց եւ ոչ մտքին ծայրեն
կ'անցներ, իրենց աւատականներն անհանգիստ
ընել, տեղերնէն շարժել, ու այնչափ ժամանակէ
ի վեր ստացած ու վայելած երկիրներէն դիրնը
դուրս հանել: — Հայերն այն վատապն ունե-
ցած գեղացուց զանգատներէն, որ 120—150
արտավարի չափ ջորենի ու խոտի երկիր ստացան:

(Ըրբ-սե-իւնի-)

ՅՈՎՀ. ՄՆՆՅՈ



ՊԱՐԹԱՎԱՅՈՒՆ ԸՆԾԵՐԸ, ՆՐՈՇՆ ԸՆԾԵՐԸ, ՆԵՐՍԵՍ ԵՒ ԱՊՈԼՈՆ

(Ըրբ-սե-իւնի-)

Հայերի Նրասի գնտից անցնելը:

«Մայր Արացու ափերով
Քալամուր գտնւմ եմ,
Հին սիր դարոց յիշատակ
Անցաց մէջը պարոււմ եմ:

«— Արացս, ինչո՞ւ ձկնաց նետ
Պար չես ընծում մանկական,
Դու զեռ ծովը չը հասած,
Արցազնու եւ եմս մանս:»

— Մէջը ուռցող Արացը,
Փրփուր հանքի իր տակը,
Մնալի ծննդ գողաւոր,
Ըստէս խօսեց յատակից:

— «Դիզանի, անմիտ պատանի,
Նիրհոս ինչո՞ւ զարեւոյ
Վերդումս ես, Նորգումս
Իմ ցաւերը բերաւոր:»

ԴԷ լիբր պատմութի:

«1605 թուին Սեպտեմբերին, մի շաբաթա-
տիկ օր, գեա վաղորդեան արեւը չը ծագած,
Արացքի գետափուները ծագէ ի ծագ լցուած էր
անհամար բազմութեամբ մարդկան: Տղամարդ, կին,
պառաւ, ծեր, մանուկ, նորասփռ դեղանի հայ ժո-
ւանք, կայսառ, քաղ հայ պատանիներ աղեղորմ
կախառով լայն ու գոռած էին: Պարսից Զա-
հարառ թագաւորը իր ուսգանա հետ բազմած
գետի ափին, հրաման տուեց, որ ժողովուրդն ան-
ցրեն զգետից. իսկոյն մանեակները ընկնելով
բազմութեան մէջ, սկսեցին բարձրանալով գոռալ
— հրաման եւ Մեծ Զահարառ Զահնշահից ան-
միջապէս անցնել գետը. յաղաղորդ խոտի պիտի
պատժուի. բազմութիւն լրատան, նաւաներ, որոնց
մի մասը բերել էին կապից ծովից, լցրել էին
գետի երեսը, սակայն անհամար բազմութիւնը
անցնելու համար չաւ չէին, զօրականներն ստիպում
էին շուշանալ, բայց ժողովուրդն տեսնում էր, որ
անկարելի է մի օրում այդքան սարսափելի բազ-
մութիւնը նաւերով փոխարկելը. գիտէր այս եւ

Զահարառ, ուստի հրամայեց, որ նաւերով ու
լատերով միայն զօրքի ծանր բեռները եւ հաւա-
քած աւար տանին, իսկ ժողովուրդն թող լող
տալով անց կենայ: Այս հրամանը աւելի աղբու-
ռնելու եւ արհաւիրք սփռելու համար, սկսեցին
որի ականջը, որի շեթուները, որի ձեռք կարել, իսկ
հայ երեւելիները մի երկուսի եւս դուռը կտրե-
լով, յիցեցին վայ կանգնեցրին գետի եզերքին,
Զօրքն սմէն կողմից շջխատանով ժողովուրդն,
մղում էր նրան գետի բերանը. թշուառ Հայերը
աղաչեցին, որ գէթ թող տան ջրի ճանապարհները
գննելը եւ հուռն ու ծանծաղուտ տեղերով գտնել,
բայց Զահի հրամանն անողորմ էր. պետք է ան-
միջապէս բոլորը ջուրը թափուին. Օսմանցիք
ետեւից դալին եւս, ժամանակ չկող մտածելու եւ
պատահելու: Այս խոտ հրամանն ընդունելով զար-
սիկ վարել զօրքը իր անդթութիւնը կատարու-
թեան եւ դադանութեան հասցրին, որ եւս
այդտեղ բայուեց մի քստմանի, աղեղորմ տես-
րան, որ ոչ մի գրէշ չէ կարող նկարագրել: Պա-
րիշներն սկսեցին մահախններ, բերով, գտնել
զանքներով եւ որերով հարուածներ առնել ստի-
պել ժողովուրդն գետը մտնել. թշուառների ծիւց,
աղաղակը, գառն ողջ, հեծուկեան լայնք աշ-
խարհք էր վեր առել. Նոյս աղաղակը երկինք էր
հասնում. մահառն երկունքը պարսեւէ էին բա-
լորին. ետեւից վարիշները, դադանութիւնը, օտոր,
առաջից սարսափելի գետը, երկու կողմից եւս
հաստառապէս մահ. ոչ մի կողմից փրկութեան
յոյս չկայ, եւ ահա այդ սարսափելի յուսահատու-
թեան մէջ հայրը թողեց, լքաւ իր զաւակը,
ողտմարդ էր կնոջ, մայրը իր աղջիկը, եղբայրը իր
քրոջ. հարուառ, աղքատ, շինական, աղանական,
աշխարհական, հոգեւորական աղեղորմ կախանով
թափուեցին գետի մէջ. դուրս, օղորմութիւնը ան-
հետացաւ. ամեն մարդ աշխատում էր իր կենքը
փրկել. շուտով որբնեց եւ յորձանուտ գետի
երեսը լցուեց դիակներով, անմեղ զահերի մարմին-
ներով. ով լողալ դիտէր, մի կերպ ազատուում էր,
ով չգիտէր, յատակն էր իջնում. օրհասական
կուռից պաշարուելով, լուզողները խափանում էին
միմեանց փրկութիւնը. աղայք, աղկուսք, հիւանդ-
ներ ջրի երեսն իբրեւ խախ լցուել էին, իբրեւ
մըշկեւ ջրում էին. յոյ կանայք ծանրութիւնից,
սանտալ մայրերը մանուկներով ծանրաբեռնուած,
ընկղմում էին եւ անհետանում. միմեանց ուրերից
բռնուելով, ջրի խաղն էին առգում. ջուրը ջրում
ստանում էր իբրեւ փայտի սառնիչ: Միայնակները
կամ լողանալով փրկուում էին եւ հանում էին
եզը, կամ բռնելով նաւակները ծայրերից, ձկնէր
եւ դրստների կողմից, այն կերպով դուրս էին
գալիս: Ըժիթութիւնը գնալով ռաստակաւում էր.
Պարսիկները բարբարոսութիւնը իր վերջին ծայրին
հասաւ. նրանք ողորմելի Հայերին սկսեցին տանել
եւ ստացուածքը ձեռքներից խլել. խոշորները
կոծն ու աղաղակը, օգնութեան ծայրը թնդացնում
էր սարքն ու ձորերը, բայց ով էր լուսմ, ով էր
գիթում: Ով բարխաւոր էր, մի ձի կամ մի դրստ
ունէր, կարգաւում էր մի կերպ փրկուել, բայց
հազիւ հասնում էր միւս եզըր սրտաբորբի, այն-

տեղ նոր փորձանք, նոր բարդիւթեան աստիճան եւ մահ սպասում էր. այստեղ կամ Պարսիկն եր սպանուած, իրան կընէ եւ գոյգը յափշտակելու համար կամ իր ընտանեկան գեղեցիկ աղջիկներին եւ տղաներին գերի վարած էր տեւում. անորեն Պարսիկ զինուորները ընդհանուր խառնակութեան միջոցին յափշտակուած էին հայ գեղանի կոյսերին եւ պատաններին ու փախցնում, իրանց անասնու-կան կիթն յազեցնելու ու պղծելու համար Ուր-բան մայրեր անդառնալ փախին, սրբան հայ առա-քելի կանայք բռնաբարուեցան. Աստուած միայն գիտէ:

Ահա այսպիսի սարսափելի գառնութեան մէջ հայ ժողովուրդն անցաւ. Արեւելք, որի յոր-ձանքն, անշուշտ, յորդացաւ որոմէնի հայ աղջիկ-ները, երեխաների, պատանիների արտասուելով ու արհեստով:

Զուգայեցիկներ զաղծականութիւնն ընդ-հանուր ժողովրդի այդ մեծ տարագրութիւնից առանձին կատարուեց, մի քանի օրից յետոյ: Հասարակաց յանձնեց վրացի իշխան Թահմազ Ղուլի Բեգին, որ պատանգ էր Պարսից մետ եւ ուրացել էր քրիստոնէական հասարակ շուենցնել Զուգայեցիկներին: Գալով Զուգա, մոնենտիկ-ների ձեռքով հրատարակեց Հաճի հրամանն եւ ստիպեց անմիջապէս շուել. Զուգայեցիկներն եր-կար աղաչանքներով եւ թանկագին ընծաներով հաջիւ կարողացան համոզել նրան Յ օր ժամա-նակ տալ իրանց: Արովհետեւ բեռնակիր անա-տուններ թիւը շատ քիչ էր եւ բաց ի գրանից, Զուգայեցիկները յոյս ունէին վերագառնալու, ուստի իրանց հետ վերցնելով թանկագին իրերը, փնայած գոյրեց զանգիւղն եւ թաղեցին զանգան սեղերում: Ամբողջ ժողովուրդն հաւաքուելով մի տեղ, Ս. Աստուածանէի եկեղեցու առաջ, լացով, ողբով հրաժեշտ տուեց իր հայրենիքին եւ քահանաներն ասնելով եկեղեցիների բա-նալին, ձգեցին երասխի մէջ, նրա պահպանու-թեան յանձնելով իրանց հայրենիքը: Երբ Թահ-մազ Ղուլի Բեգը բերեց հասցեաց Զուգայեցի-կներին երասխի ափը, Հաճի բանակը, վերջինս մեծ կարեկցութիւն ցոյց տուեց նրանց եւ հրա-մայեց զօրքին օգնել ու ձեւերով եւ ուղտերով անփնաս փոխադրել նրանց գետի միւս ափը. ապա իմանալով, որ Թահմազ Ղուլի Բեգն չէ կործանել Զուգայի շինութիւնները, Հաճ բար-կացաւ եւ հրամայեց անմիջապէս վերագառնալ ու աւերել, շուտով կատարուեց այդ հրամանն եւ 15 օր ամբողջ հրդեհն աւերում էր Զուգայի շինութիւնները: Գրանալով Հաճարբաս կամեցաւ միանգամայն կորել ժողովրդի յոյսը՝ վերա-գառնալուց:

Ինչպէս երեւում է, Զուգայեցիկներն ա-ռանձին նեղութիւն չկրեցին տարագրութեան ժամանակ. նախ՝ որովհետեւ Հաճն առանձին ինամբ էր ցոյց տալիս նրանց, երկրորդ՝ հարուստ լինելով, նրանք ընծաների եւ փէջաշների մի-ջոցով կարող էին ազատ մնալ հարստահարու-թիւնից, վերջապէս, այն հանգամանքը, որ զեռ-մինչեւ այսօր նոր-Զուգայում գտնւում են մեծ-ածաւալ եւ թանկագին ձեռագիրներ, որոնք, անկասկած, Զուգայեցիկները բերել են իրանց հետ, պարզ ցոյց է տալիս, որ նրանք իրանց հետ կարողացան անդափոխել եթէ ոչ իրանց ամբողջ գոյքն եւ հարստութիւնը, գոնէ նրանց մի նշա-նաւոր մասը: Մնում է մի հարց լուսաբանել. ճիշդ որ ժողովուրդը սարսափելի նեղութիւններ կրեց եւ մեծ զոհեր ու փախստիւններուց երասխն անցնելուց, եթէ հաւատանք Աւսթել վարդա-պետին, այո, ինչպէս եւ նկարագրեցիք, բայց կան եւ ուրիշ պատմաբաններ, որոնք ուղղակի ասում են, թէ ոչ մի փնաս չեղաւ: Նոր-Զու-գայի Ամենափրկչի վանքի մի ձեռագիր Աւետա-րանի յիշատակարանի մէջ, ահա ինչ է գրուած:

Սի գառն եւ ի վշտաշտ ժամանակին որ ոչ գրով կարեմք բաւել եւ կամ ծանուցանել զե-ղեալ շարին... եւս առաւել տառապալեալ ագգիս մեղոյ Հայոց, որ եր պատճառան այս զի ի Թուա-կանից Ուլի ամին ելաւ ֆարհատ փաշայն ի Ստամ-պուլս հրամանաւ Սուլթան Մուրատին ինչա ի քաղաքն երեւան, եւ փախոյց Տեր երկրին զՄահ-մազ իւանն Պարսից թագաւորութեան խուզարանդ Հաճին... ապա ի Թուականիս Ուլի ելաւ Ա-պաշայն՝ որդի խուզարանդ Հաճին վեճիւնդի իւր հայրենական աշխարհին, յաւուրս աշխանային յանկարծ ինչա ի Թաւրիզ, եւ զաուրս տներն եւ հինդ կոտորեաց զապագ Օմարին, եւ էառ զերդն: Անտի ինչա ի Դաիշուան, զայն եւս էառ օր մի, եւ ապա եկեալ ի վերայ Երեւանից բերդին, ետօնէ ամիս պատերազմեցաւ ընդ նոսա եւ ապա կոտո-րեաց զամենեւեան եւ էառ զերդն: Յետ այնորիկ զանց մինչեւ ի ոահմանս Կարայ բերդին, եկն զօրքն Պարսից տակերայն զազմով երկիր՝ եւ գերեցին բազում Բիւրատոնեայս յաւելի քան զեր-կու բիւրս: Յայժամ ելաւ Զալի որդին Ստամ-պուլս՝ անհուն եւ անհամար հեծելովք ի վերայ Հահարբասին: Երբժամ զբազմութիւն նոցա ետեա՝ հնարս իմացաւ եւ արար հրաման աւերելոյ աշ-խարհին Հայոց: Ելաւ Ամբղուռնական բազում զօրք եւ հհան զամենեւեան ի տանէ, եւ ի հայ-րենեաց, Հայք՝ Տաւրիկ՝ Երասխայն մինչեւ ի գաւառս Գողթան: Այլ մեզ թէ յայնձ աւուր նեղութիւնն ո՞վ կարէ պատմել, թէ որպէս անու-ղորձարար տանէին զապագ Հայոց, ոչ թողութիւն որդիս բարեզն (?), զժեղացեալ ձեռքոյ, կամ առցեն մարդ զմանկունս իւրեանց: Այնպիսի շատապա-վարէին, որ ոչ հայր՝ զօրքին գտանէր, եւ ոչ

եղբայր՝ զեղբարս. եւ ոչ այր զկին իւր, եւ ոչ մայր զդուստր իւր բաղումը ծերը եւ տկարը կոխան եղեալ մեռանէին. եւ լինէին գէշ դաղանայ: Երբ ժամ հասան ի մեծ գետն Երասխ, եկեալ խապար, թէ ահա հաթին զօրք Օմարին, որ ոչ գոյ հնար դերմանելոյ: Յայնժամ ահ մեծ անկաւ. ամենեւեան թափեցան ի ջուրն եւ անցին ի միտսին, թագաւորն եւ զօրք իւրն եւ Ռամիկըն, եւ ոչ որ փնտառա խնամել Ստանոյ: Աւերեցին զգիւղաբաղաբն Զուլայ որ էր գեղեցկաշէն եւ հիւսաղի քաղաք...:

Հաւանական է սակայն, որ խօսքը վերաբերում է Զուլայեցիներին, որովհետեւ Առաքել վարդապետի ասածներն հաստատուած են եւ ուրիշ ակնատեսն պատմաբանները: Վերջոյնեալ վանքի ձեռագիրների մէջ մնացել է մի ժամանակակից աշուղի յօդիւնած երգը, որ ահա.

«Նկայաց Ազամայ որդիք ժողովալ է մի Նստինք
Իս մեզ պատմեմ լալագին զօրք եւ զօրն Հայոց ազգին
Ի Հայոց հազար թուին եւ յիսուն նորք յաւելին:
Նըր փլեկեաց պատեղծին միտ յամենան Նաւասարդին:
Խաւար տորեաց մեր Ազգին՝ հատապաւ մեր ծէնն
երկնային.

Որպէս կարելու ի յամպէն՝ Նոյնպէս զօրքն Պարսիք
ի ինն:

Գլուխ զօրաց էր Նոցին՝ Շահաբաս Խուլաբաւը որդին,
Հազարապետ ընդ Նոսա՝ Հէրոսան քաղաքն ինն:
Հորս կողմն վրան որդին զաւազ զեղբն պաշարեցին,
Ետքն ամիս սկալթ տուին՝ եւ ետքն օր վեր անցուցին:
Երբեք աւարին թողեցեալ՝ թօթատան էրն կան-
գնեցաւ,

Թէ զգլխալուի կասնն վերայ քեզ կոխ չարծեցաւ:
Շահաբասն ուրախացաւ՝ իւր զօրաց թինն լիմացան,
Սկն ու զարհ հազա՝ փողոտէն իմս զգցցաւ:
Թնին ղմալի կապեալ՝ խանթուն խալթ ուղար-
կեաց,

Վաթսուն հազար ծիւաւոր՝ առ կերանն զօրքն ժողովեաց:
Ժողովեաց Սուլթանն ու խան որք եկան ծոտան առ
արցայն,

Երեք օր երեք զինք՝ տրտմութեամբ Նստան ի դիվան:
Մին սուտ զարբան գտան. Նայեցուց Նշան աւերման,
Այնպիսոյ աշքն կուրանայ՝ ինքն անկանի ի խոր
զննտան:

Կրկին յետ հարցմունք յայն՝ Նա էարբ զարին ամենայն.
Ասաց աւերեցէ՞ք զերկիրդ՝ ու տարէ՞ք զմարդն Աս-
պահան:

Այն... արքային՝ իւր զօրացն հան հրաման,
Ի Մելոյ քաղաքն հետ՝ աւերեցէ՞ք մինչեւ Նախշուան:
Երթեմ առին հրաման՝ ազգս մահմետական,
Շարքի էր լուս կիրակի՝ որ կրակ տվին հարեւան:
Սարէրն ամին սուգ մտան՝ ծով եւ գետ ի լաց չար-
ծեցան,

Շատ հարսն եւ աղջիկ տարան ի քաշան եւ ի ըսպահան:
Շատ նազիկ ծոց պատկեր՝ սէվաղէմ պարսիք ծնոք
անկան,

Շատ զօրաւորք կտիչ Նետողաց ազգէն սպանան:
Շատ զգեղեցիկ ծոց պատկեր՝ կապիք մահկոնք յօտ-
նատակ թաւայիմիմ մոռում:

Շատոնք արազնն ընկան՝ ջրախնն առ Աստուած
փոխեցան:

Աստ ըսկորէք բիբաֆայ, մեզ վկայ բերեմ զճիւղայ,
Փոխան սաղմոսաց նրդիք՝ թու աւերակն ծայր կու գայ:

Զգեղեցիկ ծոց պատկերներն որ ինսամիղդու զնոսա սնար,
Ցարան ըսպահան քաղաքն՝ խառնեցին ի պղծ թալթ
որ կայր:»

Այս երգի մէջ աչքի է ընկնում մի հանգամանք եւս. աշուղը Հայերին գաղթեցնելու պատճառը վերագրում է Նրան, որ մի ֆայլի կամ հարցուկ խորհուրդ տուեց Հաջաբասին վտարել Հայերին: Որովհետեւ Հայերի գաղթականութիւնն առաջ բերող պատճառների քննութիւնը շուտով մեր քննութեան առարկայ պէտք է լինի, ուստի մենք հարկաւոր համարեցինք եւ աշուղի այդ կարծիքի վրայ ուշադրութիւն հրաւիրել:

Մի այլ կանխատես, Հին-Ջուղայի մօտի Համբ գիւղի բնակիչ եւ Կախապկայ վանքի միաբան Ստեփան վարդապետն ահա ինչ ողբ է յօրինել Հայերի գաղթականութեան առիթով.

«Ափսոս ընդ Հայոց խեղճին ժողովուրդ,
Երրոցան ելաք անմեղ անխորհուրդ,
Գեղի գնաման ար զկա ի Խորասան,
Հաղթած ու ծարաւ, տկուր թշուառական:

Խարիւր ու խաղաք ցաւի դիմացաց
Չեք քաղցրիկ երկրէն ոտ ուղւոս չըղաք.
Խօսիք ծնր խոր մօր գերեզման թողաք,
Տնեցին թէ ծամեղք ուրիշի տուաք:

Ըս սիրուն զաշտուն, մեծ մեծ քաղցըններ,
Չաղցրիկ չըրերն, ծնր չէն գեղերն,
Ումս ար թողաք հուգ, որ գնաման աք.
Հնպէս կընն որ մոռանում քեզ:

Վախում ամ էնպէս մտքեմուրդ ընկնի.
Ինչքան որ ողջ ար մտքերնուդ չընկնի.
Բարի ծնր որդուց թողանց պատմեցէ՛ք
Հնպէս խայրեմքն քանդած թողեցէք:

Մասին անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշուն, սուրբ Հշմանի,
Մեք խոր վերապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զմոռանան մինչ ի օրն դատաստանի:

Ալքըս կուրանաք, չընքս կոտորէր,
Խոնդ Հայաստան, եւ էսպէս ջրտններ.
Թէ մեռած էի, ընծ երանի էր,
Քան թէ կննդանի՝ աշքս բաց տեսներ:»

Այս բուրբից կարող ենք այն եզրակացու-
թիւնն հանել, որ գաղթող ժողովուրդը, մա-
սամբ, մեծ տառապանքներ եւ Նեղութիւններ,
փնտրեցին կրեց գաղթականութեան ընթացքում,
բայց Զուլայեցիները, համեմատաբար, քիչ
փնտրեցին կրեցին եւ քիչ հարստահարութիւն-
ներն ենթարկուեցին: ¹

Հ. ԱՌԱՔՏԵՆԻՍ

(Ը-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն)



1 Հայերի այս մեծ գաղթականութիւնն եւ նրա
աղէտները Դեբարդեղն է մի ակնատես վկայ՝ Օգոստի-